

ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ 1988—1989 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՓԱԿՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Սույն թվականի հունիսի 7-ին Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, նախագահությամբ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, տեղի ունեցավ հոգևոր ճեմարանի 1988—1989 ուսումնական տարվա փակման հանդիսավոր արարողությունը:

Փակման արարողությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսներն ու ողջ ուսանողությունը:

Տերունական աղոթքից հետո ճեմարանի երգչախումբը՝ ղեկավարությամբ հոգևոր ճեմարանի երաժշտության դասախոս Կոմիտաս Քեշիշյանի, կատարեց Հայկական ԽՍՀ-ի պետական հիմնը և ճեմարանի քայլերգը:

Հանդիսության բացման խոսքով հանդես եկավ հոգևոր ճեմարանի փոխտեսուչ Սեպուհ աբդ. Զուլչյանը, որից հետո ուսանողությունը՝ եկեղեցական երաժշտության դասախոս Խորեն Պալյանի գլխավորությամբ մեր բազմադարյան հոգևոր երաժշտության գոհարներից կատարեց Խորենացու «Ծագումն հրաշալի», «Ծառագայթ և կերպարան» և Ներսես Շնորհալու «Այսօր աղբիւր գիտութեան» հոգեպարար շարականները:

Ուսանողության անունից հանդես եկավ ավարտական լսարանի սան Ալվանդ սարկավագ Զարգսյանը, որն իր շնորհակալական խոսքում ասաց.

«Սահակ—Մեսրոպյան սուրբ արմատի վրա հիմնված այս նվիրական հաստատության կամարների ներքո, Տիրոջ ողորմածությամբ, այսօր կրկին հավաքվել ենք հրաժեշտ տալու անցնող ուսումնական տարվան: Բացառիկ և անմոռաց է օրը, հատկապես մեզ՝ ավարտական լսարանի յոթ սարկավագներիս համար: Ակամայից վերհիշում ենք այն երջանիկ օրը, երբ ոտք դրեցինք հոգևոր ճեմարանի հարկից ներս: Անցած հինգ տարիների ուսումնառության ընթացքում, աչքի առջև ունենալով մեր ազգանվեր եկեղեցականների օրինակը՝ վերջնականապես եկանք այն խորին համոզման, որ լավագույնս մեր ազգին կարող ենք ծառայել որպես Հայ Առաքելահաստատ Եկեղեցու սպասավորներ:

Եվ ահավասիկ այս նվիրական պահին մեզանից ամեն մեկը գտնվում է խորհրդավոր ուրախության և տխրության մեջ, որովհետև մեր հոգու խորքում մենք վերանորոգում ենք այն սրբազան ուխտը, այն վեհ ու վսեմ նպատակը, որ է՝ ճեմարանն ավարտելուց հետո անմնացորդ նվիրվել մեր Աստվածահաստատ Սուրբ Եկեղեցուն ու ժողովրդին, աներեր հավատքով ու անհուն սիրով մեր հոգու յուղն ավելացնել Լուսավորչի անմար կանթեղին:

Հետևաբար այս սրտահույզ պահին ի խոյոց սրտի շնորհակալություն ենք հայտնում մեր հոգու և մտքի մշակներին՝ մեր սիրելի դասախոսներին, գլխավորությամբ Վեհափառ Հայրապետի, քանի որ նրանք մեր խոպան հոգիներում սերմանեցին իմաստության սերմեր և անձանձրույթ տքնեցին, որպեսզի այդ սերմերը տան իրենց արժանի պտուղները: Նրանց մտքի լույսով ու հոգու ջերմությամբ է, որ այդ սերմերը ծլարձակեցին և պտղաբերեցին:

Վեհափառ Տեր, շատ են հատկապես ձեզանից մեզ տրված բարիքները, որոնք հարստացնում են մեր միտքը, սիրտն ու հոգին և առավելագույն չափով գոտեպնդում մեզ՝ լիապես կատարելու համար Ձերդ Սրբության պատգամները: Պատգամներ, որոնք մենք ընդունում ենք որդիական խոնարհությամբ:

Մեր երախտիքի խոսքն ենք ուղղում նաև հոգևոր ճեմարանի տեսչությանը, մեր դաստիարակներին, Մայր տաճարիս լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանին, տարբեր առիթներով մեզ օգնության ձեռք պարզած Մայր Աթոռի միաբանությանը:

Վեհափառ Տեր, սիրելի դասախոսներ, հավաստիացնում ենք, որ հրաժեշտ տալով ճեմարանին, մենք չենք բավարարվի մեր ունեցած գիտելիքներով, այլ հավատարիմ ծառայի նման կբազմապատկենք մեր գիտության քանքարները: Ես իմ սարկավագ եղբայրների անունից հավաստիացնում եմ, որ կլինենք նվիրյալ և արժանի սպասավորներ՝ սրբությամբ պահելով այն ամենն ավանդականը, որ մեզ ժառանգեցին մեր նախնիները:

Ձերդ Սրբություն. ողջ ուսանողության անունից թույլ տվեք մաղթել Ձեզ արարատյան արևշատություն, արցախյան երկարակեցություն և ստանալ Ձեր հայրական օրհնությունները»:

Գեղարվեստական բաժնում դաշնամուրային կատարմամբ ելույթ ունեցան Ա. լսարանի ուսանող Հովհաննես Սարգսյանը և Բ. լսարանի ուսանող Հակոբ Նալբանդյանը, որոնք կատարեցին Արամ Խաչատրյանի «Անդանդինո» և «Հայկական պար» ստեղծագործությունները: Արտասանվեցին Մկրտիչ Պեշիկթաշլյանի, Վահան Թեքեյանի, Հովհաննես Շիրազի և Վաչագան Հովհաննիսյանի ստեղծագործություններից, որից հետո ճեմարանի երգչախմբի կատարմամբ հնչեցին «Կիլիկիա» և «Հայրենիքիս հետ» հայրենասիրական երգերը:

Հանդես գալով ճեմարանի ուսումնադաստիարակչական աշխատանքների մասին հաշվետու զեկուցմամբ, հոգևոր ճեմարանի տեսուչ արժանապատիվ Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը ասաց.

«Երևի հոգևոր ճեմարանի ոչ մի ուսումնական տարի այնքան ալեկոծ ու դժվարին չի եղել, որքան որ եղավ անցնող՝ 1988—1989 ուս. տարին:

Հազիվ էր սկսվել այն, երբ ողջ Հայաստանը կրկին ալեկոծվեց Ղարաբաղյան խնդիրներով, սկսվեց Ադրբեջանից հայության արտագաղթը, որի հիմնական հանգրվանը եղավ Մայր Հայաստանը, Էջմիածին կենտրոնով: Թեև այդ օրերին հոգևոր ճեմարանը կանոնավոր կերպով շարունակեց իր ուսումնական աշխատանքները, սակայն թե՛ դասախոսների և թե՛ ուսանողների սրտերն ու հոգիները չէին կարող անտարբեր մնալ ու չխռովվել:

Այդ դժվարին օրերին էր, երբ Աստված մեկ անգամ ևս փորձեց հայությանը. ահավոր երկրաշարժը կործանեց հյուսիսային Հայաստանը. դարերի արհավիրքների ազդեցության տակ հայ ժողովուրդը մոռացել է լաց ու կոծը—հայի աչքերն ամենամեծ հարվածի պահին անգամ թեև թրջվում են, սակայն արցունք չի գոյանում, սառչում են պարզապես այդ աչքերը, կարծես արհամարհանքով նայելու համար վրա եկած փորձությանը, և այդ սառնության միջից նորից սկսում ենք վերականգնել մեր կորցրածը, կրակ տալ մեր կյանքին: Նույն հոգով հոգևոր ճեմարանի ուսանողությունը երկրաշարժի առաջին իսկ օրվանից նվիրվեց տուժածներին օգնելու գործին, ճեմարանում երկու ամիս դադարեցվեցին դասավանդությունները: Այդ օրերը այլ տեսակի դասեր եղան ուսանողության համար, անջնջելի կնիք ունեցող դասեր, որոնք իմացականի կողքին ունեին նաև հոգեկան-բարոյական և արիության ձեռքբերման ուժեր:

Այդ ամենից հետո հոգևոր ճեմարանը ուժ գտավ իր մեջ շարունակելու և այսօր ավարտին հասցնելու այս ուսումնական տարին»:

Իր խոսքում արժանապատիվ տեր հայրը ներկաներին ծանոթացրեց նաև տեսչական ու դասախոսական կազմին: Այնուհետև, անդրադառնալով այս ուս. տարվա հունձքին, ասաց, որ հակառակ դժվարին օրերի, ուսումնական մակարդակը հոգևոր ճեմարանում, բարեբախտաբար, մնաց նույն բարձրության վրա, և ճեմարանը այս տարի ևս հասավ արժանի հոգևորականներ պատրաստելու իր բուն նպատակին, քանզի մարտի 15-ին և մայիսի 13-ին անցյալ ուսումնական տարվա 9 շրջանավարտներ, հաջողությամբ պաշտպանելով իրենց հանձնա-

րարված դիպլոմային աշխատանքները, ընտացան ճեմարանի դիպլոմ: Նրանցից մեկը արդեն ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա, իսկ հինգը շուտով կձեռնադրվեն կուսակրոն քահանա:

Մայիսի 7-ին այս ուսումնական տարվա ավարտական լսարանի 7 սաներ ստացան սարկավագական ձեռնադրություն, որոնց, հնգամյա դասընթացն ավարտելուց հետո, հանձնարարված է պատրաստել դիպլոմային աշխատանքներ՝ զանազան թեմաներով:

Ապա Վեհափառ Հայրապետը, հոգևոր ճեմարանի տեսչության կողմից սահմանված պարգևները առաջադեմ ուսանողներին հանձնելուց հետո, Իր օրհնության խոսքում անդրադարձավ Եկեղեցու գործունեության համար բացված նոր հնարավորություններին, այն ջանքերին, որ ի գործ է դնում Մայր Աթոռ Ս. Էջմիածինը՝ բավարարելու համար ժողովրդի հոգևոր կարիքները:

Վեհափառ Հայրապետը ընդգծեց հոգևոր ճեմարանի դերը՝ մանավանդ Հայ Եկեղեցին նոր սպասավորներով ապահովելու համար, քանի որ աճում է նոր գործող եկեղեցիներ բացելու անհրաժեշտությունը, իսկ նվիրյալ սպասավորների քանակը անբավարար է: Նորին Սրբությունը, խոսքն ուղղելով ուսանողությանը, նրանց մաղթեց եռանդ, կորով, աշխատասիրություն և կարգապահություն՝ արդյունավետ կերպով հետևելու համար դասընթացներին և նախապատրաստվելու վաղվա ծառայության:

Փակման հանդիսությունը ավարտվեց Տերունական աղոթքով:

ԳԱՐՍԵՎԱՆ ՍՐԿ. ԵՐԱՆՅԱՆ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ԽՍՀՄ ՖՈՒՏԲՈԼԻ
ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՄՐՑՈՒՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ

(21 հուլիս 1989)